



«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ» «ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

Քրիստոսի Հրաշափառ Յարութեան տօնը կը կոչուի նաեւ Ս.Չատիկ, որ կը նշանակէ զատում, բաժանում, հեռացում մեղքերէն եւ վերադարձ առ Աստուած:

Չատիկը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հինգ տաղաւար տօներէն մէկն է: Ս. Յարութեան տօնի նախընթաց երեկոյեան եկեղեցիներուն մէջ կը մատուցուի ճրագալոյցի Ս. Պատարագ: ճրագալոյցին բացառաբար Ս. Պատարագը կը մատուցուի Շաբաթ երեկոյեան, որ կը կոչուի նաեւ Խթում: Հայ Եկեղեցւոյ մէջ տարին միայն 2 անգամ երեկոյեան կը մատուցուի Ս. Պատարագ՝ Ս. Ծննդեան եւ Ս. Յարութեան տօներուն նախորդող օրը:

Ըստ եկեղեցական կարգի, եկեղեցական օրը կը փոխուի երեկոյեան ժամերգութենէ յետոյ, ուրեմն ճրագալոյցի Ս. Պատարագէն վերջ արդէն Կիրակի է եւ վերջ կը գտնէ նաեւ 48 օրուան պահքը: Ապա ընտանիքները կը հաւաքուին աւանդական ընթրիքի՝ միասին դիմաւորելու մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հրաշափառ Յարութիւնը:

Կիրակի առաւօտեան կը կատարուի ժամերգութիւն, Անդաստանի արարողութիւն, ապա կը մատուցուի տօնական Ս. Պատարագ: Ս. Յարութեան տօնին հաւատացեալները զիրար կ'ողջունեն ըսելով.

«Քրիստոս Յարեաւ Ի Մեռելոց»

«Օրինեալ Է Յարութիւնն Քրիստոսի»:

ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔԸ

Չատկուան տօնի նախօրեակին, Յիսուս գիտեր որ հասած է այն ժամը, երբ սպանուելով, այս աշխարհէն իր հօրը մօտ պիտի երթայ: Ան մեծ սիրով սիրեց իր աշակերտները, որոնք այս աշխարհին մէջ իր հետեւորդներն էին:

Աշակերտներուն ոտքերը լուալէ ետք, Յիսուս ըսաւ անոնց. «*Լաւ գիտցէք, ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ*»: Յովհաննէս հարցուց «*Տէր, ո՞վ է*»: Յիսուս պատասխանեց. «*Այս պատառը որու որ տամ, ան է*»: Եւ Յիսուս պատառը տուաւ Յուդային:

Յուդան պատառը առնելէ ետք, անմիջապէս դուրս եկաւ: Գիշեր էր:

Մինչ ընթրիքը կը շարունակէին, Յիսուս հացը առաւ, օրհնեց, կտրեց եւ աշակերտներուն տալով, ըսաւ. «*Առէք, այս իմ մարմինս է*»:

Յետոյ Յիսուս առաւ գինիով լեցուն բաժակը եւ ըսաւ. «*Այս նոր ուխտի արինս է, որ շատերու մեղքերու քաւութեան համար պիտի հոսի*»:



ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՐ՝ ՈՒՌԱՆ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՈՒՔԵԱՆՆ
ՆԿԱՐԱՇԱՐՈՒՄԵՐ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՒՄԵՆՆ

ՅԻՍՈՒՄԻ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Ընթրիքեն ետք, Յիսուս իր աշակերտներուն հետ եկաւ պարտեզ մը, որուն անունը Գեթսեմանի էր, աղօթեց իր հօր ապա երբ Յիսուս կը խօսեր իր աշակերտներուն հետ, իրենց մօտեցաւ սուրբորով եւ գաւազաններով զինուած ամբոխը: Անոնց հետ էր Յուդան, որ ըսած էր զինուորներուն. *«Որուն հետ որ էս համբուրուիմ՝ ան է Յիսուսը»*, եւ ըսաւ. *«Ողջոյն ուսուցիչ»*, եւ համբուրեց զայն:

Մինչ զինուորները կը ձերբակալէին Յիսուսը, անոր աշակերտներէն մէկը՝ Սիմոն Պետրոս, քաշեց իր սուրը ու կտրեց աւագ քահանային ծառաներէն մէկուն ականջը: Յիսուս ըսաւ անոր. *«Այդ սուրը իր պատեանին մէջ դիր, որովհետեւ անոնք որոնք սուր կը վերցնեն, սուրով կ'իյնան»*: Ապա դպաւ ծառային ականջին, եւ բժշկեց զայն:

Չինուորները ձերբակալեցին Յիսուսը:

Չինուորները Յիսուսը յանձնեցին Պաղեստինի հռոմեացի կառավարիչ Պոնտացի Պիղատոսին: Պիղատոս ամբոխը գոհացնելու համար ազատ արձակեց Բարաբբա անունով աւազակը, իսկ Յիսուսը մտրակով ծեծել տալէ ետք, զայն յանձնեց զինուորներուն, որպէսզի խաչեն:



ՅԻՍՈՒՄԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Առաւօտեան ժամը իննին Յիսուսը խաչեցին:

Անոր հետ խաչեցին նաեւ երկու աւազակներ, մէկը աջ, միւսը՝ ձախ կողմը: Յիսուսի հետ խաչուած աւազակներէն մէկը նախատեց զինք. բայց միւս չարագործը սաստեց ընկերը, եւ ըսաւ. *«Աստուծո՛ւմ չէ՛ս վախնար դուն, որ նոյն պատիժը կը կրես. մեր պատիժը արդար էր, որովհետեւ մեր ըրածներուն արժանի հատուցումն է, որ ստացանք, մինչդեռ ան չար բան մը չէ ըրած»*: Ապա ըսաւ Յիսուսի. *«Տէ՛ր, յիշէ՛ զիս, երբ քու թագաւորութեամբդ գաս»*: Յիսուս ըսաւ անոր. *«Աստահ եղիր, այսօր իսկ ինծի հետ դրախտի մէջ պիտի ըլլաս»*:

Չինուորներէն մէկը սպունգը թաթխեց քացախին մէջ, եւ զայն ամրացնելով եղեգի մը ծայրը, երկարեց Յիսուսի շուրթներուն: Երբ սպունգը դպաւ Յիսուսի շուրթներուն, ան ըսաւ. *«Ամէն ինչ կատարուած է»*: Անկէ ետք, գլուխը կախեց ու հոգին աւանդեց:

Այդ պահուն տաճարին վարագոյրը պատռուեցաւ՝ բաժնուելով երկու մասի:

Յիսուսի դիմաց կանգնած էր հարիւրապետը, որ կը դիտեր թէ ինչպէս Յիսուս աւանդեց հոգին: Հարիւրապետը ըսաւ. *«Իսկապէս այս մարդը Աստուծոյ Որդին էր»*:



ՅԻՍՈՒՄԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի օր, առաւօտ կանուխ, Մարիամ Մագդաղինացին գերեզման եկաւ եւ տեսաւ որ գերեզմանի դրան քարը վերցուած էր: Ան վազեց Սիմոն Պետրոսի ու Յովհաննէսի մօտ, եւ ըսաւ անոնց. *«Տէրը գերեզմանէն վերցուցեր են եւ չենք գիտեր, թէ ուր դրած են գինք»:*

Մարիամ գերեզմանին մօտ կանգնած կու լար երբ տեսաւ իր կողքին կանգնած Յիսուսը, բայց չճանչցաւ զայն: *«Ով կին ինչո՞ւ կու լաս եւ զո՞վ կը փնտռես»*, հարցուց Յիսուս: Մարիամ կարծելով թէ պարտիզպանն է, ըսաւ. *«Եթէ դուն վերցուցած ես, ըսէ ինծի, ո՞ւր դրած ես զայն, որպէսզի երթամ եւ վերցնեմ»:* Յիսուս ըսաւ. *«Մարիամ»:* Մարիամ ճանչցաւ իր Տէրը ու ըսաւ. *«Ուսուցիչ»:*

Մարիամ Մագդաղինացի զնաց եւ աշակերտներուն պատմեց, թէ ինք տեսաւ Տէրը:

Իր յարութեան օրը՝ Կիրակի երեկոյեան, Յիսուս տան մը մէջ հաւաքուած իր աշակերտներուն երեւցաւ: Ան կանգնեցաւ աշակերտներուն մէջտեղը եւ ըսաւ. *«Խաղաղութիւն ձեզի»:* Ապա Յիսուս ցոյց տուաւ իր ձեռքերը եւ կողը: Աշակերտները շատ ուրախացան երբ տեսան իրենց Տէրը:

Յիսուսի երեւցած ժամանակ առաքելներէն մէկը՝ Թովմաս, այնտեղ չէր: Միւս աշակերտները ըսին որ տեսած են Տէրը: Թովմաս չհաւատաց անոնց եւ ըսաւ. *«Եթէ չտեսնեմ անոր ձեռքերուն վրայ գամերուն հետքերը եւ չշօշափեմ կողերը, չեմ հաւատար»:*

Ութ օր ետք, առաքելները կրկին հաւաքուած էին: Անոնց հետ էր նաեւ Թովմաս: Հակառակ որ դռները փակ էին, Յիսուս կանգնեցաւ անոնց մէջտեղ, եւ ըսաւ. *«Ողջոյն ձեզ»:* Ապա ըսաւ Թովմասին. *«Բեր մատներդ եւ դիր ասիերուս վերքերուն վրայ: Բեր ձեռքդ եւ շօշափէ կողս: Անհաւատ մի՛ ըլլար, այլ՝ հաւատացեալ»:*

Թովմաս բացազանչեց. *«Իմ Տէրս եւ Աստուածս»:*


Յիսուս ըսաւ. *«Դուն գիտեսար ու հաւատացիր, երանի անոնց, որոնք առանց տեսնելու կը հաւատան»:*



ՉԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԻՔ

Այս գեղեցիկ ձեռայինները կրկան գործածել Չատկուան սեղանը զարդարելու համար՝ անոնց մեջ դնելով գոյնզգոյն հաւկիթներ:

ՃՈՒՏԻԿԷ ԿՈՂՈՎՆԵՐ



Պետք ունիս.-
Նարնջագոյն, դեղին, կապոյտ, կարմիր խաւաքարտի, խէժի:

1- Դեղին խաւաքարտին վրայ գծել եւ կտրել ճուտիկին մարմինը՝ առանց կտուցի՝:

2- Նարնջագոյն խաւաքարտին վրայ գծել եւ կտրել ճուտիկին կտուցը: Կարմիր կամ կապոյտ խաւաքարտին վրայ գծել եւ կտրել վզկապը:

3- Չանոնք փակցուր ճուտիկին մարմնին վրայ: Գծել ճուտիկին աչքը:

4- Ճուտիկին մարմինը կլոր դարձուր չինական լամբարի մը նման: Փակցուր կռնակի երկայնքին եւ քիչ մը վրան ճնշէ, որպէսզի երիզները բացուին:

Կողովդ պատրաստ է, կրկան գոյն տուրմով կամ գոյնզգոյն հաւկիթներով լեցնել:

Վստահաբար դուն արդէն ներկած ես Չատկուան հաւկիթները, իսկ տունը զարդարած ես պզտիկ ճուտիկներով եւ նապաստակներով: Զիմա, ազատ ժամանակ շատ ունիս, կրկան այս պզտիկ հաւկիթներով պսակը շինել, գայն կախել մուտքի դրան վրայ:

Այս ձեռայինին համար պետք ունիս խաւաքարտէ պնակի, մելան՝ ներկելու, գարնանային կամ Չատկուան գոյներով թուղթերու, խէժի, մկրատի եւ ժապաւենի:

1- Խաւաքարտէ պնակին ներսի բաժինը կտրել եւ պահէ միայն դուրսի օղակաձեւ բաժինը:

2- Եթէ տարբեր զարդարանքներով թուղթեր ունիս, անոնց ետեւի բաժինին վրայ գծել հաւկիթները եւ գանոնք կտրել: Այլապէս, կրկան հաւկիթները գծել եւ կտրել խաւաքարտի կտորի մը վրայ, եւ ապա գանոնք գոյնզգոյն ներկել եւ զարդարել հաւկիթները. գծելու համար կրկան գործածել ընդհանրապէս քուրթներու համար գործածուող կաղապար մը, կամ խաւաքարտին վրայ գծել եւ կտրել կաղապար մը:

3- Հաւկիթները փակցուր խաւաքարտէ օղակին վրայ:

4- Ժապաւենի կտոր մը փակցուր պսակին ետեւը եւ պսակը կախել մուտքի դրան վրայ:

ՄՈՒՏՔԻ ԴԻՄՆ ՎԼԱՅ ՊՍԱԿ

